ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ք. Մարտունի **26-ը հունիսի 2024 թվական**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

2024 թվականի հունիսի 26-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հինգերորդ հերթական նիստը:Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 17 անդամները: Բացակա էին՝ Հայկ Ալեքսանյանը, Տիգրան Ալեքսանյանը, Հասմիկ Բաղդասարյանը, Արա Գասպարյանը, Անդրանիկ Գրիգորյանը, Արարատ Խաչատրյանը, Նաղաշ Հակոբյանը, Կարինե Հովհաննիսյանը, Արմեն Սեդրակյանը, Հակոբ Վարդանյանը: Համայնքի ավագանու անդամ Սեդրակ Սահակյանը մասնակցեց օրակարգի հաստատման քվեարկությանը, սակայն վատառողջ լինելու պատճառով նիստը վարողի թույլտվությամբ հեռացավ նիստերի դահլիճից:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին բնակավայրերի վարչական ղեկավարները և աշխատակազմի բաժինների պետերը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26-ի վեցերորդ նստաշրջանի հինգերորդ հերթական նիստի օրակարգը՝

   1) «Հակոբյան» պարային ստուդիայի տնօրեն Ռուզաննա Սարգսյանին նվիրատվությամբ գումար տրամադրելու մասին.

   2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի №259-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

   3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բնակիչներին դրամական օգնություններ տրամադրելու մասին.

   4) Համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների (հողամասերի) սահմաններին կից Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի, Վաղաշեն, Ծովինար բնակավայրերի բնակիչների կողմից իրենց հողամասերում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացմանը համաձայնություն տալու մասին.

   5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակիչներ Գոռ Վոլոդիայի Կարապետյանին, Արմեն Սարիբեկի Սարգսյանին, Զոլաքար բնակավայրի բնակիչ Վլադիմիր Ազատի Մերոյանին, Վաղաշեն բնակավայրի բնակիչ Ասատուր Միրզաջանի Մարգարյանին, Վարդաձոր բնակավայրի բնակիչներ Ժորիկ Նորիկի Կարապետյանին, Հայկ Արայիկի Ղազարյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով շինություններ կառուցելու համաձայնություն տալու մասին.

   6) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի վարդենիկ բնակավայրի 05-085-1090-0001, 05-085-1089-0001 և 05-085-1088-0001 կադաստրային ծածկագրերով փողոցներն անվանափոխելու մասին.

   7) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրի 23-րդ փողոց, թիվ 6/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-034-0128-0118 կադաստրային ծածկագրով 0.025 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասն աճուրդային կարգով օտարելու համաձայնություն տալու մասին.

   8) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 05-039-0218-0013 կադաստրային ծածկագրով 0.01936 հա և 05-039-0218-0014 կադաստրային ծածկագրով 0.06043 հա մակերեսներով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հանգստի համար նախատեսված հողամասերը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

9) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրում գտնվող 05-034-0323-0004 կադաստրային ծածկագրով 0.5715 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

10) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-034-0314-0036 կադաստրային ծածկագրով 1.05829 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու համաձայնություն տալու մասին.

11) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զորագյուղ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 585.0 հա ընդհանուր մակերեսով արոտավայրերը վարձակալության տրամադրելու համաձայնություն տալու մասին.

12) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 435.0 հա ընդհանուր մակերեսով արոտավայրերը վարձակալության տրամադրելու համաձայնություն տալու մասին.

13) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 160.0 հա մակերեսով արոտավայրերը վարձակալության տրամադրելու համաձայնություն տալու մասին.

14) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զորագյուղ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 150.0 հա մակերեսով արոտավայրը վարձակալության տրամադրելու համաձայնություն տալու մասին.

15) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 30.0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը և 2.3 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքը վարձակալության տրամադրելու համաձայնություն տալու մասին.

16) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028 թվականների տեղական պլանը հաստատելու մասին.

17) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Արծվանիստի մշակույթի կենտրոն», «Ծովինարի մշակույթի կենտրոն», «Զոլաքարի մշակույթի կենտրոն», «Ներքին Գետաշենի մշակույթի կենտրոն», «Լիճքի մշակույթի կենտրոն», «Ծովասարի մշակույթի կենտրոն», «Զորագյուղի մշակույթի կենտրոն», «Վարդաձորի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին.

18) 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Արծվանիստի մշակույթի կենտրոն», «Ծովինարի մշակույթի կենտրոն», «Զոլաքարի մշակույթի կենտրոն», «Ներքին գետաշենի մշակույթի կենտրոն», «Լիճքի մշակույթի կենտրոն», «Ծովասարի մշակույթի կենտրոն», «Զորագյուղի մշակույթի կենտրոն», «Վարդաձորի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

19) «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Գարեգին Նժդեհի անվան մանկապատանեկան կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.

20) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ենթակայության «Արծվանիստի մշակույթի կենտրոն», «Ծովինարի մշակույթի կենտրոն», «Զոլաքարի մշակույթի տուն», «Ներքին Գետաշենի մշակույթի կենտրոն», «Լիճքի մշակույթի տուն», «Ծովասարի մշակույթի կենտրոն», «Զորագյուղի մշակույթի կենտրոն», «Վարդաձորի մշակույթի կենտրոն» մշակութային հիմնարկները լուծարելու և համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 29-ի №22-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

21) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.

22) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին.

23) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 29-ի №45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

24) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի առաջին հերթական նիստի օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Օլգա Դավթյանը և Լուսինե Վարդանյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Լսեցին

«ՀԱԿՈԲՅԱՆ» ՊԱՐԱՅԻՆ ՍՏՈՒԴԻԱՅԻ ՏՆՕՐԵՆ ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով «Հակոբյան» պարային ստուդիայի տնօրեն Ռուզաննա Սարգսյանի 11.06.2024 թվականի դիմումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. «Հակոբյան» պարային ստուդիայի տնօրեն Ռուզաննա Սարգսյանին համայնքի բյուջեից նվիրատվությամբ տրամադրել 240000 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ պարի խմբակ հաճախող Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ութ երեխաների համար տարազներ ձեռք բերելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Սեդրակ Սահակյանը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի №259-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի «2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների

թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» №259-Ա որոշմամբ հաստատված հավելված №2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Մարտունի համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
3. Սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Քվեարկությանը չի մասնակցել Սեդրակ Սահակյանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՇԱՀԻՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի արձանագրությունները՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բյուջեից ներքոնշյալ բնակիչներին արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները փոխհատուցելու նպատակով տրամադրել դրամական օգնություններ՝

   1) Մարտունի քաղաքի բնակիչ Սամվել Հակոբի Պետրոսյան - 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ.

   2) Մարտունի քաղաքի բնակիչ Արտակ Ռաֆիկի Խլղաթյան - 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ.

   3) Մարտունի քաղաքի բնակիչ Վիկտոր Վարազդատի Թովմասյան - 150000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ.

   4) Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Գագիկ Սարգսի Վալեյան - 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված համայնքի ներքոնշյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություններ՝

1) Լիճք բնակավայրի բնակիչ Մայիս Թայմանովի Մկրտչյան-300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ.
2) Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Արմեն Վեսմիրի Քերոբյան - 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ.
3) Գեղհովիտ բնակավայրի բնակիչ Աբով Սպարտակի Պողոսյան- 150000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ.
4) Վաղաշեն բնակավայրի բնակիչ Էմմա Նորիկի Գեղամյան-100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ.
5) Ձորագյուղ բնակավայրի բնակիչ Շիրազ Վահանի Մոսոյան-100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ.
6) Գեղհովիտ բնակավայրի (Լեռնակերտ) բնակիչ Գարիկ Սպարտակի Մխիթարյան-100000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

3. Վերին Գետաշեն բնակավայրի բնակիչ, Եվրոպայի բազկամարտի մեծահասակների փոխչեմպիոն Ազատ Անդրանիկի Սրապյանին տրամադրել 200000 (երկու հարյուր հազար) դրամ դրամական օգնություն՝ Թուրքիայի Հանրապետությունում բազկամարտի միջազգային մրցաշարի եզրափակիչ փուլին մասնակցելու նպատակով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Սեդրակ Սահակյանը: Չի քվեարկել Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ) ՍԱՀՄԱՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ, ՎԱՂԱՇԵՆ, ԾՈՎԻՆԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 128-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝

1) Կարեն Սամվելի Հովհաննիսյանի կողմից Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Գ. Զիրոյան փողոց, թիվ 35 հասցեում գտնվող իր խառը կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած հյուրանոց-ավտոսպասարկման կետի 2-րդ հարկն օրինականացնելու համար.
2) Համլետ Սոսիկի Վարդանյանի կողմից Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 2 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու համար.
3) Մարտիկ Ռաֆիկի Մանուկյանի կողմից Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 2-րդ թաղամասի 4-րդ փողոց, թիվ 10 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Սեդրակ Սահակյանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԳՈՌ ՎՈԼՈԴԻԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆ ՍԱՐԻԲԵԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ԶՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԼԱԴԻՄԻՐ ԱԶԱՏԻ ՄՀԵՐՅԱՆԻՆ, ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՍԱՏՈՒՐ ՄԻՐԶԱՋԱՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ, ՎԱՐԴԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԺՈՐԻԿ ՆՈՐԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ՀԱՅԿ ԱՐԱՅԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԻ (ՀՈՂԱՄԱՍԻ) ՍԱՀՄԱՆԻՆ ԿԻՑ՝ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 128-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝

1) Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակիչ Գոռ Վոլոդիայի Կարապետյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Մարտունի քաղաքի Նարեկացու փողոց, թիվ 14 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել կցակառույց.

2) Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակիչ Արմեն Սարիբեկի Սարգսյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Մարտունի քաղաքի Հիվանդանոցի 1-ին փողոց, թիվ 53 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել ավտոտնակ.

3) Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրի բնակիչ Վլադիմիր Ազատի Միերյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Զոլաքար բնակավայրի 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 29 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել անասնաշենք և ավտոտնակ.

4) Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի բնակիչ Ասատուր Միրզաջանի Մարգարյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Վաղաշենի բնակավայրի 2-րդ փողոց, թիվ 31 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել ավտոտնակ.

5) Մարտունի համայնքի Վարդաձոր բնակավայրի բնակիչ Ժորիկ Նորիկի Կարապետյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Վարդաձոր բնակավայրի Ալաշկերտի փողոց, թիվ 59 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել ավտոտնակ.

6) Մարտունի համայնքի Վարդաձոր բնակավայրի բնակիչ Հայկ Արայիկի Ղազարյանին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Վարդաձոր բնակավայրի 24-րդ փողոց, թիվ 7 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել ավտոտնակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Անդրանիկ Մովսիսյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-085-1090-0001, 05-085-1089-0001 ԵՎ 05-085-1088-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշումամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի 05-085-1090-0001 ծածկագրով 11/3 փողոցը վերանվանել 11-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 05-085-1089-0001 ծածկագրով 11/4 փողոցը վերանվանել 11-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 05-085-1088-0001 ծածկագրով 11/5 փողոցը վերանվանել 11-րդ փողոց, 5-րդ նրբանցք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Անդրանիկ Մովսիսյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 23-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-034-0128-0118 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.025 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրի 23-րդ փողոց, թիվ 6/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-034-0128-0118 կադաստրային ծածկագրով 0.025 հա մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման) օտարել աճուրդային կարգով:
2. Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը սահմանել 200000 (երկու հարյուր հազար) դրամ, մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսը՝ 10000 (տասը հազար) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Սեդրակ Սահակյանը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-039-0218-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.01936 ՀԱ ԵՎ 05-039-0218-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.06043 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՍՏԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1 և 76-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N16-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի պահանջը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի Ա-10 թաղամասի 1-ին փողոց, թիվ 92/1 հասցեում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 05-039-0218-0013 կադաստրային ծածկագրով 0.01936 հա մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված) 30 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել կառուցապատման իրավունքով՝ տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանելով 23000 (քսաներեք հազար) դրամ:
2. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի Ա-10 թաղամասի 1-ին փողոց, թիվ 94/1 հասցեում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 05-039-0218-0014 կադաստրային ծածկագրով 0.06043 հա մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված) 30 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել կառուցապատման իրավունքով՝ տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանելով 72000 (յոթանասուներկու հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-034-0323-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.5715 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Էդգար Հովհաննեսի Աղաբեկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրում գտնվող 05-034-0323-0004 կադաստրային ծածկագրով 0.5715 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի՝ խելացի անասնագոմ կառուցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-034-0314-0036 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.05829 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ձոլաքար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-034-0314-0036 կադաստրային ծածկագրով 1.05829 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը 5 (հինգ) տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության:
2. Հողամասի վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 12000 (տասներկու հազար) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը: Չի քվեարկել Մեխակ Հակոբյանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 585.0 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» №16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջը և 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» №1477-Ն որոշումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ձորագյուղ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 585.0 հա ընդհանուր մակերեսով արոտավայրերը երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 435.0 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» №16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջը և 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» №1477-Ն որոշումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 435.0 հա ընդհանուր մակերեսով արոտավայրերը երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 160.0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» №16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջը և 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» №1477-Ն որոշումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 160.0 հա մակերեսով արոտավայրերը («Դեղձուտ» կոչվող տարածքից) երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը, Տարոն Արշակյանը և Հակոբ Բարոյանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 150.0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական

սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» №16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջը և 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» №1477-Ն որոշումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ձորագյուղ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 150.0 հա մակերեսով արոտավայրը երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը, Տարոն Արշակյանը և Հակոբ Բարոյանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 30.0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ԵՎ 2.3 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և հիմք ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգ սահմանելու մասին» N1477-Ն որոշումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 30.0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության՝ հողամասի տարեկան վարձավճարի չափը 1 հեկտարի համար սահմանելով 1300 (հազար երեք հարյուր) դրամ:
2. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրում գտնվող համայնքային

սեփականություն հանդիսացող 2.3 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքը երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության՝ հողամասի տարեկան վարձավճարի չափը 1 հեկտարի համար սահմանելով 4000 (չորս հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը: Չեն քվեարկել Հակոբ Բարոյանը, Մեխակ Հակոբյանը և Սյուզաննա Մարկարյանը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4.4-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028 թվականների տեղական պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Լ/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԾՎԱՆԻՍՏԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԾՈՎԻՆԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԶՈԼԱՔԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԼԻՃՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԾՈՎԱՍԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՎԱՐԴԱՁՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Արծվանիստի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերություն և հաստատել նրա կանոնադրությունը:
2. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծովինարի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերություն և հաստատել նրա կանոնադրությունը:
3. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Զոլաքարի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերություն և հաստատել նրա կանոնադրությունը:
4. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ներքին Գետաշենի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերություն և հաստատել նրա կանոնադրությունը:
5. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Լիճքի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերություն և հաստատել նրա կանոնադրությունը:
6. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծովասարի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերություն և հաստատել նրա կանոնադրությունը:
7. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ձորագյուղի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերություն և հաստատել նրա կանոնադրությունը:
8. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Վարդաձորի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերություն և հաստատել նրա կանոնադրությունը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ա/

Լսեցին

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԾՎԱՆԻՍՏԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ»,

«ԾՈՎԻՆԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԶՈԼԱՔԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԼԻՃՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԾՈՎԱՍԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԶՈՐԱԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՎԱՐԴԱՁՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. 2024 թվականի համար հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Արծվանիստի մշակույթի կենտրոն», «Ծովինարի մշակույթի կենտրոն», «Զոլաքարի մշակույթի կենտրոն», «Ներքին Գետաշենի մշակույթի կենտրոն», «Լիճքի մշակույթի կենտրոն», «Ծովասարի մշակույթի կենտրոն», «Զորագյուղի մշակույթի կենտրոն», «Վարդաձորի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 1-8 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը: Չի քվեարկել Հակոբ Բարոյանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ա/

Լսեցին

«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Գարեգին Նժդեհի անվան մանկապատանեկան կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպութան կանոնադրությունը նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՐԾՎԱՆԻՍՏԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԾՈՎԻՆԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԶՈԼԱՔԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ», «ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԼԻՃՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ», «ԾՈՎԱՍԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՎԱՐԴԱՁՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի №22-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 68-րդ և 69-րդ հոդվածների, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Լուծարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ենթակայության «Արծվանիստի մշակույթի կենտրոն», «Ծովինարի մշակույթի կենտրոն», «Զոլաքարի մշակույթի տուն», «Ներքին Գետաշենի մշակույթի կենտրոն», «Լիճքի մշակույթի տուն», «Ծովասարի մշակույթի կենտրոն», «Ձորագյուղի մշակույթի կենտրոն», «Վարդաձորի մշակույթի կենտրոն» մշակութային հիմնարկները (այսուհետ՝ Կազմակերպություններ):
2. Նշանակել լուծարման հանձնաժողով (լուծարող)՝ համաձայն №1 հավելվածի:
3. Սահմանել, որ

   1) Կազմակերպությունները համարվում են լուծարված, իսկ նրանց գոյությունը՝ դադարած պետական գրանցման պահից.

   2) Կազմակերպությունների լուծարմամբ նրանց գործունեությունները դադարում են՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու.

   3) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո լուծարման հանձնաժողովին են անցնում Կազմակերպությունների գործերի կառավարման լիազորությունները.

4) պարտատերերի պահանջները բավարարելուց հետո Կազմակերպությունների մնացած գույքը հանձնել համայնքին: Սահմանել լուծարման կարգն ու ժամկետները՝ համաձայն №2 հավելվածի:

4. Սույն որոշման մասին անհապաղ տեղեկացնել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին՝ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում Կազմակերպությունների լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունը գրառելու նպատակով:
5. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ենթակայության մշակութային հիմնարկները վերակազմակերպելու և անվանափոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը համաձայնություն տալու մասին» №22-Ա որոշումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԹԱԹՈՒԼ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԹԱԹՈՒԼ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 90-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից 1168900.0 հազար դրամ հատկացնել համայնքի 2024 թվականի բյուջեի ֆոնդային մաս և բաշխել հետևյալ ոլորտներին.

1) «Ոռոգման համակարգերի վերանորոգում և շահագործում» նախահաշվի 5112 ծախսային հոդվածին 506207.0 հազար դրամ՝ Մարտունի համայնքի Երանոս, Վարդաձոր, Ձորագյուղ, Ծովասար, Լիճք, Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Գեղհովիտ Լեռնակերտ, Մադինա, Արծվանիստ, Ծովինար, Վարդենիկ, Զոլաքար, Աստղաձոր և Վաղաշեն բնակավայրերում ոռոգման համակարգերի, ինչպես նաև Վարդենիկ և Աստղաձոր բնակավայրերում երկու խորքային հորերի կառուցման աշխատանքներ կատարելու նպատակով.

2) «Ջրամատակարարում և ջրահեռացում» նախահաշվի 5112 հոդվածին 348143,0 հազար դրամ՝ Արծվանիստ բնակավայրի խմելու ջրագծերի արտաքին ցանցի, Ծովինար, Վարդենիկ, Զոլաքար, Աստղաձոր, Մադինա, Ներքին Գետաշեն, Վարդաձոր, Ծակքար, Ձորագյուղ բնակավայրերի խմելու ջրագծերի ներքին ցանցերի կառուցման, Երանոս բնակավայրի «Ծողանի աղբյուր» կոչվող տարածքում ջրահավաք ավազանի և ջրագծի կառուցման, Լիճք բնակավայրի խմելու արտաքին ջրագծի, ջրընդունիչ ավազանի (կապտաժ), օրվա կարգավորչ ջրամբարի (ՕԿՋ), ինչպես նաև Ձորագյուղ բնակավայրի «Բոռբոռ» կոչվող աղբյուրի ակունքում թափառող ջրերի վրա գլխամասային կայանի ու 150 մետր ջրատարի կառուցման աշխատանքներ կատարելու նպատակով.

3) «Ճանապարհային տրանսպորտ» նախահաշվի 5112 հոդվածին 248000.0 հազար դրամ՝ Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի, Ծովինար, Վարդենիկ, Զոլաքար, Աստղաձոր, Վաղաշեն, Գեղհովիտ, Մադինա, Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն, Լիճք, Ծակքար, Ծովասար, Ձորագյուղ, Երանոս բնակավայրերի ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների կատարման և Մարտունի քաղաքի, Ծովինար, Վարդենիկ, Վարդաձոր բնակավայրերի մայթերի սալիկապատման աշխատանքներ կատարելու նպատակով.

4) «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի 5112 հոդվածին 59000,0 հազար դրամ՝ Մարտունի համայնքի Երանոս, Ձորագյուղ, Լիճք և Վարդենիկ բնակավայրերի մանկապարտեզների շենքերի, բակային հատվածների խաղահրապարակների բարեկարգման ու նորոգման աշխատանքներ կատարելու և կահավորելու նպատակով.

5) «Մարտունի քաղաքի կենտրոնական գրադարան» նախահաշվի 5134 հոդվածին 5200.0 հազար դրամ՝ Մարտունի քաղաքի կենտրոնական

գրադարանի շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելու և փորձաքննություն անցկացնելու նպատակով.

6) «Փողոցների լուսավորում» նախահաշվի 5134 հոդվածին 2350,0 հազար դրամ, Մարտունի քաղաքի Երևանյան և Մյասնիկյան փողոցների նոր լուսավորման համակարգերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը կազելու և փորձաքննություն անցկացնելու նպատակով:

2. Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեի «Ճանապարհային տրանսպորտ» նախահաշվի 4251 հոդվածից պակասեցնել 15182,0 հազար դրամ և հատկացնել՝

1) «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի 4657 հոդվածին 10000,0 հազար դրամ՝ Մարտունի համայնքի Ծովինար, Վարդենիկ, Ներքին Գետաշեն, Լիճք, Երանոս, Վերին Գետաշեն, Ծակքար և Ձորագյուղ բնակավայրերի մանկապարտեզների շենքերի տանիքներին արևային ֆոտովոլտային կայաններ տեղադրելու նպատակով համայնքի կողմից համապատասխան համաֆինանսավորում կատարելու համար.

2) «Մշակույթի տներ և ակումբներ» նախահաշվի 4657 հոդվածին 2400,0 հազար դրամ՝ Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Ծովասար, Ձորագյուղ, Մադինա և Լիճք բնակավայրերի մշակույթի կենտրոնների շենքերի տանիքներին արևային ֆոտովոլտային կայաններ տեղադրելու նպատակով համայնքի կողմից համապատասխան համաֆինանսավորում կատարելու համար.

3) «Շրջակա միջավայրի պաշտպանություն» նախահաշվի 4637 հոդվածին 2782,0 հազար դրամ՝ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում որպես հիմնադիր անդամ և շահառու հանդիսացող համայնք՝ «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ին դրամաշնորհ հատկացնելու նպատակով:

3. «Բնակարանային շինարարություն և կոմունալ տնտեսություն» նախահաշվի 4637 հոդվածից պակացեցնել 237329,625 հազար դրամ և հատկացնել նույն նախահաշվի 4511 հոդվածին՝ որպես սուբսիդիա համայնքի թիվ 1 և թիվ 2 կոմունալ տնտեսություններին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի №45-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 29-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-034-0314-0035 կադաստրային ծածկագրով 2.1933 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու համաձայնություն տալու մասին» №45-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետում «№19122023-05-0075» թվերը փոխարինել «№31052024-05-0090» թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի առաջին հերթական նիստի օրը սահմանել 2024 թվականի սեպտեմբերի 27-ին, ժամը 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Սեդրակ Սահակյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110-Ա/

Ավագանու անդամներ՝

ՏԱՐՈՆ ԱՐՇԱԿՅԱՆ

ՀԱԿՈԲ ԲԱՐՈՅԱՆ

ՊԱՊ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ՕԼԳԱ ԴԱՎԹՅԱՆ

ԿՈՐՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԵԽԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ

ՄԱՐԻՆԱ ՀՈՎԵՅԱՆ

ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՈՀԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Սվետլանա Հովհաննիսյանը _____